ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

# ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

# ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝** Սովորողների կրթության կազմակերպման և դաստիարակման հարցերում հայոց լեզվի և գրականության ուսուցչի և սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների համագործակցման արդյունավետ եղանակները

**ԱՌԱՐԿԱ՝** Հայոց լեզու և գրականություն

**ՀԵՂԻՆԱԿ՝** Իրա Ոսկանյան

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝** Վերիշենի միջնակարգ դպրոց

*Աշխատանքը թույլատրված է պաշտպանության*

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝** Սոնա Կամոյի Ալավերդյան

**ԳՈՐԻՍ 2023**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....3

1. ՈՒՍՈՒՑԻՉ-ԾՆՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ....5

2. ՈՒՍՈՒՑԻՉ-ԾՆՈՂ (ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ)-ՍՈՎՈՐՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ....7

2.1. Ծնողներին դպրոց հրավիրել, դասալսումներ....8

2.2. Ծնողական ժողովները....9

2.3. Այցելություն՝ ընտանիքի անդամներին....9

2.4. Խորհրդատվություն....10

2.5.Թեմատիկ ցերեկույթներ, բանավեճեր, գրքի քննարկում....10

2.6. Դասասենյակի ձևավորում, պատի թերթի կազմում, հեղիանակային վահանակի պատրաստում....12

2.7. Էքսկուրսիաներ....12

2.8. Նամակագրություն՝ ծնողի հետ....13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ....14

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ....15

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից մանկավարժության մեջ տիրապետող է այն կարծիքը, որ ուսուցման և դաստիարակության բարձր որակի ապահովման համար կարևոր երաշխիք է դպրոցի և ընտանիքի արդյունավետ համագործակցությունը: 21-րդ դարի վերափոխված արժեքների տեղեկատվական տեխնոլոգիաների, հանդուրժողականության, համագործակցության պայմաններում դպրոցն այն օղակն է, որը ապահովում է ուսուցչի և նրանց ծնողների հետ երկխոսության և համագործակցության կապը: Ինչպես ընտանիքը, այնպես էլ դպրոցը ապահովում են անձի՝ որպես հասարակության լիիրավ և օգտակար անդամի ձևավորումը:

Դպրոցում այդ պատասխանատվությունը կրում է ուսուցիչը և այդ պատասխանատվությունը արդյունավետ է, եթե նա օժտված է բարոյական այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են բարությունը, համբերատարությունը, յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ անհատական մոտեցումը, մասնագիտական որակները, հեղինակությունը:

Ուսուցչի և ծնողի փոխգործակցությունը ներառում է ծնողների շրջանում այնպիսի սկզբունքների պարզաբանում, ինչպիսիք են երեխայի հանդեպ պահանջների իրատեսականությունը, համակարծությունը, հետևողականությունը, համակարգվածությունը, նրանց տարիքային առանձնահատկությունների հաշվառումը:

**Թեմայի արդիականությունը**: Այսօր, երբ աշակերտների մեծ մասը կորցրել է հետաքրքրությունը և հավատը գիտելիքների ուժի նկատմամբ, նորագույն տեխնոլոգիաների պայմաններում նվազել է նրանց հետաքրքրությունը գրքի և ընդհանրապես ուսման հանդեպ, լուրջ պահանջներ են դրվում դպրոցի, ուսուցչի և ընտանիքի առջև: Այս երկու կարևորագույն օղակները կարող են ցանկալի արդյունքի հասնել միայն համագործակցության շնորհիվ և փոխկապակցված աշխատանքի միջոցով:

Ժամանակի ընթացքում «իրավունք» և «պարտականություն» հասկացությունները զգալի փոփոխությունների են ենթարկվել դպրոց-ծնող (օրինական ներկայացուցիչ)-աշակերտ հարաբերություններում, որն էլ անհրաժեշտություն է առաջացրել այս կապի արդիական մոտեցումների, նոր մեթոդների և եղանակների կիրառման համար:

**Նպատակը և խնդիրները:** Սույն հետազոտության նպատակն է հայոց լեզվի և գրականության ուսուցման գործընթացում նպաստել ուսուցիչների, սովորողների և նրանց ծնողների կամ օրինական ներկայացուցիչների միջև համագործակցային միջավայրի ձևավորմանը՝ բարձրացնելու սովորողների կրթական ձեռքբերումների

մակարդակը և խթանելու նրանց ընդհանուր զարգացումը: Դրան կհաջողվի հասնել հետևյալ խնդիրների միջոցով.

1. ուսումնասիրել հայոց լեզվի և գրականության դասերին սովորողների սոցիալական լիարժեք զարգացման, կրթության և դաստիարակության համար բարենպաստ պայմաններ ստեղծելու կարևորությունը,
2. ներկայացնել ուսուցչի և սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցչի միջև կապի ստեղծման և դպրոցական գործընթացի, ուսումնական, դաստիարակչական, դասարանական, արտադասարանական միջոցառումների, համադպրոցական դասընթացներում ծնողի կամ օրինական ներկայացուցչի ներգրավման և կրթադաստիարակչական գործընթացում ծնողական հմտությունների ձևավորման եղանակները,
3. քննել ծնողների՝ իրենց երեխաների կրթությանը վերաբերող հարցերի մասին որոշումներ կայացնելու գործընթացում ներգրավելու միջոցները,
4. մատնանշել ծնողների մանկավարժամեթոդական պատրաստականությունը և հմտությունները բարձրացնելու ձևերը,
5. օգնել ծնողներին գտնել երեխայի հետ հաղորդակցվելու ավելի արդյունավետ եղանակներ,
6. բացահայտել ծնող (օրինական ներկայացուցիչ)-ուսուցիչ փոխգործուն դրական ազդեցությունը սովորողների կրթության և դաստիարակության գործընթացում:

**Օբյեկտ**: Սույն հետազոտության օբյեկտը կրթական համակարգում ուսուցիչների, սովորողների և նրանց ծնողների կամ օրինական ներկայացուցիչների միջև համագործակցային միջավայրն է:

**Առարկա**: Սույն հետազոտության առարկան ուսուցիչների և սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների միջև արդյունավետ կապ հաստատելու և սնուցելու համար կիրառվող մեթոդներն ու ռազմավարություններն են:

**Մեթոդը**: Հետազոտության ընթացքում օգտագործվել են երկրորդային տվյալների վերլուծման, դիտման, խորքային հարցազրույցի, բանավեճի և գրքի քննարկման մեթոդները:

## 1. ՈՒՍՈՒՑԻՉ-ԾՆՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Երեխայի ուսուցման և դաստիարակության գործընթացում կարևոր դեր ունի ընտանիքը, որի ազդեցությամբ ձևավորվում ու կայանում է սովորողի «ես»-ը, նրա կրթության և դաստիարակության շարունակական գործընթացը: Ուսուցիչը իր աշխատանքները այնպես պետք է կազմակերպի, որ ծնողները դառնան դպրոցի և ուսուցչի օգնականները վաղվա սերնդի մեջ բարոյահոգեբանական ճիշտ փոխհարաբերություններ ձևավորելու գործում:

Ժամանակակից դաստիարակության գործում առավել կարևոր են դարձել դատիարակության երկկողմանի՝ ուսուցիչ-ծնող համագործակցությունը, տարբեր օղակների համակարգված գործունեությունը, համագործակցային հարաբերությունները: Առանց ծնողական աջակցության դպրոցը ոչինչ չի կարող անել, դպրոցի աշխատանքը անարդյունավետ կլինի և ոչ ներդաշնակ:

Աշակերտների ուսումնադաստիարակչական գործընթացում շատ արդյունավետ են գրականության և հայոց լեզվի դասերը: Գրական ստեղծագործությունների ու կերպարների վերլուծությունը հնարավորություն է տալիս լուծելու բազմաթիվ խնդիրներ անկախ մարդու մասնագիտությունից, նրա հետաքրքրություններից: Այսպես՝ կարդալով, ընկալելով, վերլուծելով և մեկնաբանելով գրական երկը՝ հայտնվում ես մի իրավիճակում, որում յուրաքանչյուրը յուրովի է մտածում, երևակայում, համադրում և հակադրում: Այս բոլոր արժեքները մարդուն պետք են ամբողջ կյանքի ընթացքում՝ անկախ մասնագիտությունից և տարիքից:

Սովորողների իրական հնարավորությունների և կարողությունների վերաբերյալ ուսուցիչների և ծնողների համոզմունքներն ու պատկերացումները տարբեր են, որն էլ կարևորում է երկուստեք փոխհամաձայնությունը սովորողի կրթության և դաստիարակության գործում: Եթե ուսուցիչը սպասում է, որ սովորողները հասնեն որոշակի արդյունքի, ապա դա կիրականա, քանի որ այդ հանգամանքները որոշակիորեն ազդում են նրանց կրթական դրդապատճառների վրա: Եթե մանկավարժը հավատում է երեխայի ուժերին և նրա հետ վարվում է՝ ելնելով տվյալ դիրքորոշումից, ապա դա իր հերթին դրականորեն է ազդում սովորողների վրա՝ բարձրացնելով նրանց ուսման առաջադիմությունը: Ուսման գործընթացի և աշակերտի միջև առաջանում է փոխադարձ կապ, որն էլ ամրապնդում է երեխայի հավատը սեփական ուժերի և հնարավորությունների նկատմամբ: Ոչ մի դեպքում սպասումները չպետք է գերազանցեն հնարավորի սահմանները, հակառակ դեպքում աշակերտը կկորցնի հավատը սեփական ուժերի նկատմամբ, և կնվազեն ուսումնական հետաքրքրությունները, տեղի կունենա ինքնավերաբերմունքի որոշակի անկում:

Հանրակրթական դպրոցում գրականության ուսուցման բազմաթիվ մեթոդներ կան, որոնք նպատակաուղղված են աճող սերնդի բարոյահոգեբանական, դաստիարակչական, իմացական, ինքնաճանաչողության արժեքների ձևավորմանը:

## 2. ՈՒՍՈՒՑԻՉ-ԾՆՈՂ (ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ)-ՍՈՎՈՐՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ընտանիքը ավելի մեծ և երկարատև դպրոց է, որի դաստիարակությունը շարունակվում է դպրոցական տարիների ընթացքում և դրանից հետո: Ինչպես ասում են՝ **ընտանիքում երեխայի դաստիարակությունը միաժամանակ ծնողների ինքնադաստիարակությունն է**: Ասել է թե, որքան ընտանիքները տարբեր են իրենց սոցիալական պայմաններով, սովորույթներով, պահանջմունքներով ու կրթության նկատմամբ ունեցած վերաբերմունքով, այնքան էլ տարբեր են ուսուցիչների մոտեցումները, մեթոդները և ձևեր ընտրելը:

Ծնող-երեխա հարաբերությունները բավականին բարդ են և խորքայինմ ինչը պայմանավորված է նրանով, որ դրանք սոցիալ-հոգեբանական տեսանկյունից չափազանց կարևոր են անձի ձևավորման և զարգացման գործընթացում: Սակայն հաճախ ծնողը, չունենալով բավարար հոգեբանամանկավարժական գիտելիքներ, չի կարողանում կառուցել համապատասխան հարաբերություններ: Ահա այստեղ է, որ ուսուցիչը պետք է կանգնած լինի ծնողի կողքին, փնտրի դաստիարակության այն մեթոդը, որով էլ ներգործություն կունենա երեխայի անձի ձևավորմանը և զարգացմանը: Երբեմն երեխաները ուսուցչի հետ ավելի անկեղծ են լինում, կիսում են նրա հետ իրենց մտահոգությունները, ցանկությունները, երազանքների աշխարհը, քան ծնողների հետ:

Մանկավարժական մեր պրակտիկայում հաճախակի ենք հանդիպել նման աշակերտների, որոնք վստահել են մեզ իրենց գաղտնիքները, մտահոգությունները, և դրանք լուծում են ստացել: Օրինակ՝ աշակերտներից մեկը մորը չէր դիմում *մայրիկ* կամ *մամ* բառերով. պատճառը մոր վարքագիծն էր, որը երեխային վաղ մանկությունից ճնշում էր: Կարողացանք փոխըմբռնման հասնել ծնողի հետ, և հարցը լուծվեց: Նման օրինակները շատ են: Եվ դպրոցից հետո էլ այդ աշակերտները շարունակում են կապ պահպանել ուսուցչի հետ:

Մեծ թվով երեխաներ կան անապահով ընտանիքներում, որոնք մեծանում են զգալի զրկանքների պայմաններում: Նրանք հասարակության մեջ առկա սոցիալական խնդիրների ուղղակի և անուղղակի զոհեր են: Շրջապատում նրանց նկատմամբ ցուցաբերված անտարբերությունը և անուշադրությունը հետագայում բազմապատիկ ավելի վնասաբեր ուժով հարվածելու են այդ նույն հասարակությանը: Նրանք երբեմն ստորացվում են, որից էլ ծնվում են ստախոսությունը, գիտելիքի ցածր մակարդակը, անտարբերությունը դպրոցի նկատմամբ: «Երեխաները մեր ապագան են» կարգախոսը թևավոր խոսք չէ միայն: Այն իրականացնելու համար ուսուցչից և ծնողից պահանջվում է ճկուն մոտեցում:

Գրեթե բոլոր ծնողներն էլ ձգտում են գործել իրենց երեխաների լավագույն շահերի և իրավունքների պաշտպանության շրջանակներում, սակայն միշտ չէ, որ հաջողվում է և արդյունք է տալիս: Երբեմն ձախողվում են ոչ ճիշտ մոտեցումների պատճառով: Ծնողները հաճախ գերագնահատում են իրենց երեխաներին, նրանց կատարելության մարմնացում համարում: Նման վերաբերմունքի արժանացած երեխաները լինում են եսասեր, չափազանց ինքնավստահ, ունենում են ավելորդ ինքնագնահատական:

Այսպես՝ «Գիտե՞ս՝ ես ով եմ», «Ինձ ոչ մեկը չի կարող կպչել», «Իմ երեխան բոլորից արժանի է», «Իմ երեխան մարզպետին ձեռքով է բարևում» և նմանատիպ այլ արտահայտություններով հանդես եկող ծնողները պաշտպանում են իրենց երեխաներին առանց լսելու դիմացինին: «Իմ երեխան ճիշտ է» սկզբունքը որդեգրած ծնողների զավակները ձևավորվում են որպես ծույլ և սոցիալապես ոչ հասուն մարդ: Նրանք դժվարությամբ են ընդունում իրենց պարտավորությունները և միայն իրավունքներն են իրացնում և՛ դպրոցում, և՛ դպրոցից դուրս:

Մեր աշխատանքային բազմամյա գործունեության ընթացքում ոլորտի շահառուների շրջանում դիտումների, հարցազրույցների և կլոր սեղան քննարկումների շնորհիվ մի շարք մանկավարժական մոտեցումներ ենք առանձնացրել, որոնք նպաստում են ուսուցիչ-ծնող-երեխա համագործակցության արդյունավետության բարձրացմանը: Դրանք ներառում են հետևյալ միջոցառումները.

- ծնողներին դպրոց հրավիրել, դասալսումներ,
- ծնողական ժողովներ,
- այցելություն՝ ընտանիքի անդամներին,
- խորհրդատվություն,
- թեմատիկ ցերեկույթներ, բանավեճեր, գրքի քննարկում,
- դասասենյակի ձևավորում,
- էքսկուրսիաներ,
- նամակագրություն՝ ծնողի հետ:

### 2.1. Ծնողներին դպրոց հրավիրել, դասալսումներ

Դպրոցում ծնողների հետ հանդիպումները թույլ են տալիս համատեղ ջանքերով վճռել դաստիարակչական և ուսումնական հարցերը: Նման դեպքերում քննարկվում են աշակերտների վարքի և ուսումնական գործունեության, նրանց թերությունների շտկման և դժվարությունների հաղթահարման հարցերը: Ծնողներին չպետք է դպրոց հրավիրել միայն այն ժամանակ, երբ երեխան խախտել է կարգապահությունը կամ լավ չի սովորում, այլ պարբերաբար: Ցանկալի է, որ ծնողների համար «բաց դռների օրեր» կազմակերպվեն (ինչը մեր դպրոցում ավանդույթ է դարձել), երբ նրանք կարող են

դպրոց այցելել և զրուցել իրենց երեխաների առաջադիմության և վարքի մասին պարապող բոլոր ուսուցիչների հետ, դասալսումներ կատարել: Իհարկե, միշտ չէ, որ ծնողները կամավոր են դպրոց այցելում, ավելի շատ նախընտրում են ուսուցչի հրավերով դպրոց գալ:

## 2.2. Ծնողական ժողովները

Ուսուցիչը ծնողների հետ կապի մեջ է մտնում նաև ծնողական ժողովների ընթացքում, որոնց ընթացքում քննարկվում են դպրոցում և ընտանիքում երեխաների դաստիարակության վերաբերյալ կարևոր հարցեր: Որպես դասղեկ՝ մենք երբեմն նաև թեմատիկ ժողովներ ենք կազմակերպում, որի նպատակը մանկավարժական կոնկրետ գիտելիքներով ծնողներին զինելն է, ծանոթացումը դաստիարակչական առաջավոր փորձ ունեցող ընտանիքների գործելաոճին: Ստորև ներկայացնում ենք թեմաներ, որոնք քննարկվում են նմանատիպ հանդիպումների ժամանակ.

- Ծնողների հեղինակությունը և անձնական օրինակը՝ դաստիարակության գործում,
- Ընտանիքում երեխաներին խրախուսելու և պատժելու միջոցները,
- Ինչպե՞ս երեխային ուղղորդել գրքերի աշխարհում, համացանցային տիրույթում,
- Սեռական դաստիարակության գործում ուսուցչի և ծնողի դերը,
- Սոցիոլոգիական հարցումներ՝ ընտանիքի և երեխայի առանձնահատկությունների վերաբերյալ:

Կարևորում ենք նաև հայրիկների հետ անցկացվող ժողովները, որոնց ընթացքում քննվում է երեխայի դաստիարակության գործում հոր դերը: Մեծ լսարաններում հաճախ ծնողները ամաչում են իրենց կարևորում ենք անհատական մոտեցումը, որը թույլ է տալիս զրուցել ցանկացած հարցի շուրջ, ստուգել դիմացինի կարծիքը այս կամ այն հարցի վերաբերյալ, ճշգրտել այն անհատական մեթոդները, որոնք նպատակահարմար են իրենց երեխայի համար:

## 2.3. Այցելություն՝ ընտանիքի անդամներին

Ուսուցիչ-ծնող կապի այս միջոցը օգնում է ուսուցչին պատկերացում կազմել երեխայի բնավորության, նրա հետաքրքրությունների, հակումների, ընտանիքի անդամների փոխհարաբերությունների մասին: Ուսուցիչը պարզում է, թե ինչպիսի սոցիալական պայմաններում է ապրում աշակերտը, ինչ վարքագիծ է դրևսորում տանը, ինչպես է շփվում ընտանիքի անդամների հետ, ունի արդյոք օրվա ռեժիմ, օգնում է ծնողներին տնային գործերում և այլն:

6-րդ դասարանում Հ. Մաթևոսյանի «Հացը»պատմվածքի քննարկումից հետո, երբ այցելում ենք երեխային, համոզվում ենք դասարանում նրա արտահայտած մտքերի

ճշգրտության մեջ: Սա նպաստում է, որ ուսուցման և դաստիարակության կապը ավելի արդյունավետ ազդեցություն ունենա երեխայի վրա:

## 2.4. Խորհրդատվություն

Քանի որ ոչ բոլոր ծնողները ունեն հոգեբանամանկավարժական բավարար գիտելիքներ ու հմտություններ, շատ ենք կարևորում ծնողների խորհրդատվությունը: Դրանց միջոցով ծնողներին իրազեկում ենք երեխայի անհատական, տարիքային, վարքային, սեռային առանձնահատկությունների մասին, որոնք դրսևորվել են դպրոցի միջավայրում: Ծնողին պետք է այնպես օգնել, որ նա չզգա իր չիմացությունը, որ հավասար պայմաններ ստեղծվի նրա համար՝ երեխային տնային հանձնարարությունները կատարելու, դասապատրաստման, մասնագիտական կողմնորոշման ժամանակ աջակցելու, հանրօգուտ աշխատանքում ընդգրկելու: Ուսուցիչը միայն խորհուրդներ չպետք է տա, նա պետք է կարողանա լսել նաև ծնողների առաջարկությունները, կարծիքը, որպեսզի կարողանա ձեռք բերել նրանց վստահությունն ու անկեղծությունը: Ցանկացած հարց պետք է լուծել նրանց հետ քննարկելուց հետո: Միայն փոխվստահության պայմաններում կարելի է իրագործել սպասելիքները: Եթե ծնողը ուսուցչին հավատում է, ընդունում նրան որպես հեղինակություն, ապա կարողանում է սեփական գաղափարներով ոգեշնչել և մշտական կատարելագործման հասնել աշխատանքի մեջ:

## 2.5.Թեմատիկ ցերեկույթներ, բանավեճեր, գրքի քննարկում

Ուսուցիչ-ծնող կապի յուրօրինակ ձևեր են ցերեկույթները, ժամանցային վայրեր այցելելը, ցուցադրությունները, գրքի քննարկումը, բանավեճերը: Դպրոցում հաճախակի ենք կազմակերպում նման միջոցառումներ, որոնց ծնողները սիրով են մասնակցում, օգնում են ուսուցչին տարածքի, հագուստի ձևավորման գործում, կազմակերպչական հմտություններ են ցուցաբերում: Փոխըմբռնման այս դրսևորումները ավելի սերտ են կապում ծնողին ուսուցչի հետ, վստահություն ներշնչում, ինքնաբավ զգացողություններ ներարկում նրանց մեջ:

Գրականության դասերին և գրական խմբակի աշխատանքներում հաճախակի կազմակերպում ենք հետևյալ աշխատանքները.

- ✓ գրական ստեղծագործությամբ բեմականացում,
- ✓ գրական ստեղծագործությունների թեմաներով նկարների ցուցադրություն,
- ✓ գիրք նվիրելու տոն, գրքի քննարկում,
- ✓ մայրիկների տոն,
- ✓ ամանորյա հանդես:

Ուսուցման ժամանակակից մեթոդներից է բանավեճը: Երեխան պետք է կարողանա տարբերել վեճը բանավեճից: Բանավեճի հիմնական կանոններն են.

1. Լսի՛ր դիմացինիդ:
2. Ձիջելու բարեկրթություն ունեցի՛ր:
3. Անհարկի մի՛ միջամտիր ուրիշի կարծիքի արտահայտմանը:
4. Հարգի՛ր ուրիշների կարծիքները, բայց արտահայտի՛ր քո սեփականը:
5. Հիշի՛ր, որ յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի լիարժեքորոն մասնակցելու կարծիքների կենդանի և աշխույժ փոխանակությանը:

Բանավեճի հետաքրքիր թեմա է 11-րդ դասարանի Հայ գրականության առարկայի դասագրքում ներառված Նար-Դոսի «Սպանված աղավնի» վիպակը, որի քննարկմանը մասնակցում են նաև ծնողները, արտահայտում իրենց կարծիքները քննարկվող նյութի վերաբերյալ:

Բանավեճի ընթացքում քննարկվող հարցերից են.

1. Մի՞թե մեր ժամանակներում էլ չկան «Սպանված աղավնի» վիպակում արծարծված խնդիրները:
2. Ինչպե՞ս ես վերաբերվում Սառայի՝ սեփական ձեռքով երեխային սպանելու փաստին, և եթե դու լինեիր Սառայի փոխարեն, ինչպե՞ս կվարվեիր:
3. Արդյո՞ք Սառայի վրեժխնդրությունը արդարացում ունի:
4. Ինչպե՞ս կմեկնաբանես մայր- Սառա կապը:
5. Արդյո՞ք սիրած մարդուց վրեժ են լուծում՝ անմեղ երեխային զոհաբերելով:
6. Թուսյանի մտածողության մեջ ի՞նչն է քեզ համար դրական, և ինչը՝ բացասական: Ի՞նչ նշանաբանով է ապրում նա:
7. Արդյո՞ք միջավայրը մեղավոր է կատարվածի համար և ինչու՞:

Նման հարցադրումներով նպաստում ենք սովորողների բարոյահոգեբանական արժեքների ձևավորմանը, կյանքում ճիշտ կողմնորոշվելու, որոշումներ կայացնելու, քննադատական-վերլուծական մտածողություն զարգացնելու, կյանքի մասին ճիշտ պատկերացում կազմելու վերաբերյալ: Գրական երկերը այդ տեսակետից պարարտ հող են սովորողների համար:

Նմանատիպ քննարկումներ իրականացնում ենք նաև 7-րդ դասարանում Դերենիկ Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքի առնչությամբ: Պատմվածքի քննարկմանը մասնակցում են նաև ծնողներ: Սովորաբանր քննարկումը ծավալվում է առանցքային հետևյալ հարցերի շուրջ.

- նյութականի, խղճի և սեփականության խնդիրները
- «ավելորդի» և «անդամալույծի» գաղափարների ընկալումը,
- խղճի, եսամոլության, հոգու և նյութի հակասությունը,

- խտրականության և «ավելորդի» թեման
- հոգեբանորեն համոզի՞չ է Հաճի աղայի կերպարանափոխությունը:

Սա այն թեմաներից է, որին անդրադառնում ենք ողջ կյանքի ընթացքում, հավերժական դարձած այն միտքն է, ըստ որի «Աստծո առաջ բոլորը հավասար են, ավելորդ մարդ չկա»:

## 2.6. Դասասենյակի ձևավորում, պատի թերթի կազմում, հեղիանակային վահանակի պատրաստում

Ուսուցչի և ծնողի համագործակցության յուրօրինակ ձև է ծնողական մասնակցությունը դասարանի ձևավորման գործում: Իմանալով ծնողների հետաքրքրությունների մասին՝ կարողանում ենք հմտորեն օգտագործել նրանց ներուժը նման աշխատանքներում: Նրանք դա սիրով են կատարում, լավ օրինակ ցույց տալիս դասարանի բոլոր աշակերտներին, դրանով նպաստում սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետությանը: Գրականության կաբինետում բազում աշխատանքներ կան ծնողների և աշակերտների կողմից պատրաստված (ալբոմներ, դիմանկարներ, քանդակ, թեմատիկ պաստառներ, «կանաչ անկյուն», ասմունքի ձայներիզներ և այլն): Եթե վստահում ես, պատասխանատվությունը ավելի է մեծանում, ջանք են թափում՝ իրենց հանձնարարված գործը անթերի ու գեղագիտորեն հաճելի կատարել:

## 2.7. Էքսկուրսիաներ

Ծնողների և ուսուցիչների միջև համագործակցության միջոց է նաև համատեղ էքսկուրսիան, որի ընթացքում նորովի են բացահայտվում և՛ ուսուցիչը, և՛ ծնողը, և՛ աշակերտը: Դրանք գործնական շփումներ են դպրոցից դուրս, որոնք ունեն ճանաչողական, թեմատիկ բնույթ: Ելնելով աշակերտների հետաքրքրություններից՝ հաճախակի ենք այցելում թանգարաններ, պատմամշակութային շրջակա կոթողներ, պարզապես բնության գիրկ: Հեռավոր էքսկուրսիաները՝ գիշերակացով, հատուկ պլանավորմամբ, շատ հետաքրքիր են անցնում: Օրինակ՝ երկօրյա էքսկուրսիա Գյումրի, ՀՀ-ի տարբեր մարզերի պատմամշակութային վայրեր և թանգարաններ, արտերկիր՝ Մոսկվա (10 օր), և Մերձբալթիկա (14 օր): Գյումրիի թանգարաններ այցը ծնողների համար նոր բացահայտում էր, տպավորիչ, որն էլ ոգեշնչում էր երեխաներին, վերարժեքավորում թանգարանային այցերի դերը: Ծնողները սիրով են մասնակցում նմանատիպ էքսկուրսիաներին, ներգրավվում են ընդհանուր աշխատանքային պրոցեսին: Այո՛, նման համագործակցությունը իր դրական ազդեցությունն է ունենում աշակերտ-ծնող-ուսուցիչ կապի ամրապնդման գործում, բարելավում ուսումնադաստիարակչական աշխատանքների որակը:

## 2.8. Նամակագրություն՝ ծնողի հետ

Ծնողների հետ կապի միջոց է նաև նամակագրությունը, որը իրականացվում է օրագրերի և էլեկտրոնային նամակների միջոցով: Դրանց միջոցով ծնողներին տեղեկացնում ենք աշակերտների ուսումնական և հասարակական պարտականությունների նկատմամբ նրանց վերաբերմունքի, կարգապահական խախտումների մասին: Ծնողները ծանոթանում են, փոխադարձում իրենց մտքերը, և այդ դիտողությունները հետագայում հաշվի են առնում և օգնում երեխային՝ վերացնելու նկատված թերությունները:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ Ծնող (օրինական ներկայացուցիչ)-երեխա-ուսուցիչ ներդաշնակ փոխգործունեության այն հենքն է, որն անհրաժեշտ է աշակերտի բնավորության կերտման և կրթական ձեռքբերումների համար: Հրամայական է, որ ուսուցիչները նպաստեն այնպիսի միջավայրի ձևավորմանը, որում ծնողները ծառայում են որպես երիտասարդ սերնդի բարոյահոգեբանական պատշաճ զարգացման հարցում արժեքավոր դաշնակիցներ:
- ✓ Ուսուցիչ-ծնող համագործակցությունը պետք է ունենա միասնական պահանջներ և նպատակներ:
- ✓ Ծնողների՝ իրենց երեխաների կարողությունների գերագնահատումը կարող է հանգեցնել եսակենտրոնության և ինքնագնահատականի ավելորդ բարձրացմանը: Ավելին՝ ծնողների ոչ ճիշտ մոտեցումները, ինչպիսիք են չափից դուրս պաշտպանական վարքագիծը, կարող են խանգարել երեխայի սոցիալական զարգացմանը:
- ✓ Ուսուցիչ-ծնող-երեխա արդյունավետ համագործակցությունը կարող է խթանվել տարբեր միջոցառումների միջոցով, ինչպիսիք են ծնողներին դպրոց հրավիրելը, դասալսումները, ծնողական ժողովները, ընտանիքի անդամներին այցելությունը, խորհրդատվությունը, թեմատիկ ցերեկույթները, բանավեճերը, գրքի քննարկումը, դասասենյակի ձևավորումը, էքսկուրսիաները, ծնողի հետ նամակագրությունը:
- ✓ Ուսուցիչ-ծնող-երեխա արդյունավետ համագործակցության շրջանակում ուշագրավ է ընդգծել գրականության և հայոց լեզվի դասաժամերի առանցքային դերը: Այս առարկաները սովորողներին անգնահատելի հարթակ են առաջարկում ոչ միայն գրական ստեղծագործությունների և կերպարների խորը վերլուծություններով զբաղվելու, այլև էական գիտելիքներ, կենսական հմտություններ ձեռք բերելու և նրանց վերաբերմունքն ու արժեքները ձևավորելու համար: Սա փաստում է ուսանողների ամբողջական զարգացման գործում նշյալ առարկաների կարևորությունը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն., Մաշուրյան Ժ., «Առողջ ապրելակերպ» ուսուցիչների վերապատրաստման քառօրյա դասընթացի մոդուլ, ՀՀ ԿԳՆ, ՀՀ ԱՆ, ԿԱԻ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի գլոբալ հիմադրամ, Երևան 2010:
2. Թովմասյան Լ., Ծնող-ուսուցիչ փոխհարաբերությունը և դրա ներգործությունը ուսումնական գործընթացի վրա, ‹‹Նախաշավիղ›› 5.2010, Գիտամեթոդական հանդես, էջ 57-59:
3. Խոջոյան Լ., Ընտանիք-դպրոց-համագործակցություն, «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, 1.2017, էջ 56-61:
4. «Հանրակրթության մասին օրենք» հոդված 28/3« *Սովորողի ծնողների իրավունքներն ու պարտականությունները* (28-րդ հոդվածը լրաց. 01.12.14 ՀՕ-200-Ն, փոփ. 06.03.20 ՀՕ-101-Ն):